ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 04.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.06.2017թ. թիվ 03/73-3/10146-17 գրությամբ Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 29.05.2017թ. թիվ ԴՎԱ/1565 գրության հիման վրա, 06.06.2017թ. թիվ 03/73-3/10146-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ;

2. Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն 12.06.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ 28.03.2017թ. մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-29/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Հայտերի բացման օրը՝ 28.03.2017թ., «armeps» համակարգի միջոցով՝ ուսումնասիրելով այլ մասնակիցների առաջարկած գները, տեղեկացել է, որ իր կողմից ներկայացված գնի առաջարկը ամենացածրը չէ, հետևաբար՝ եզրակացրել է, որ 1-ին տեղ չի զբաղեցրել, այնուհետև նույն օրը և հաջորդող մի քանի օրերին gnumner.am կայքի միջոցով փնտրել է Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը, սակայն այն հրապարակված չի եղել:

14.04.2017թ.՝ հայտերի բացման օրվանից 17 օր անց, իր էլեկտրոնային փոստի SPAM բաժնում հայտնաբերել է Պատվիրատուի էլեկտրոնային փոստից ուղարկված նամակ, այն մասին, որ անհրաժեշտ է 3-օրյա ժամկետում ներկայացնել որակավորման փաստաթղթերը:

Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն գրությամբ հայտնել է նաև, որ օրենքով սահմանված ժամկետում բացման նիստի արձանագրությունը չհրապարակվելու հետևանքով հնարավորություն չի ունեցել տեղեկացվելու, որ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հայտը մերժվել է՝ գումարը տառերով սխալ գրելու պատճառով, իսկ Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, ուստի գրությամբ դիմել է Պատվիրատուին, խնդրելով հաշվի առնել այն հանգամանքը, որ ոչ ավտոմատ ծանուցումը հայտնվել է SPAM բաժնում և խնդրել է ընդունել որակավորման փաստաթղթերը, սակայն Պատվիրատուի կողմից պատասխան չի ստացել:

Ամփոփելով վերոգրյալը, Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն հայտնել է, որ Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը օրենքով սահմանված կարգով չի հրապարակվել նույն օրը, ինչի արդյունքում չի տեղեկացվել առաջին տեղ զբաղեցրած լինելու մասին:

Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն վերը նշված գրությամբ Խորհրդին խնդրել է չներառել Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում, քանի որ տեխնիկական խնդիրների և Պատվիրատուի կողմից արձանագրության ուշ հրապարակման արդյունքում հայտնվել է անբարենպաստ վիճակում:

Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.06.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկ-ները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.05.2017թ. թիվ ԴՎԱ/1565 գրությամբ ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-29/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրե- րի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ին «armeps» էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ի հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.06.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 29.05.2017թ. թիվ ԴՎԱ/1565 գրությամբ հայտնած դիրքորոշումը:

4. **ՍՑ-ԱՄ-2017/16 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՍՑ-ԱՄ-2017/16 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սպառազինությանն օժանդակ ապրանքանյութական միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՇՀԱՊՁԲ-29/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով՝ Ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով, հայտ է ներկայացրել Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2017թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.2 կետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են, բացառությամբ՝ «Երվադա» ՍՊԸ-ի, որի ներկայացրած գնային առաջարկում ընդհանուր գինը տառերով սխալ է գրված, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը մերժվել է:

3. Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն:

4. Նույն արձանագրության 4.2 կետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

5. Պատվիրատուն 06.04.2017թ. ծանուցմամբ Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ին հայտնել է, որ վերջինս Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված կարգով և ժամկետում g.teryan@mil.am էլեկտրոնային փոստին ուղարկել

Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.04.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով չեն ներկայացվել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած «Էքսպրես Շին» ՍՊԸ-ին:

7. Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն գրությամբ Խորհրդին հայտնել է, որ օրենքով սահմանված ժամկետում բացման նիստի արձանագրությունը Պատվիրատուի կողմից չհրապարակվելու հետևանքով հնարավորություն չի ունեցել տեղեկացվելու, որ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հայտը մերժվել է՝ գումարը տառերով սխալ գրելու պատճառով, իսկ Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, ուստի գրությամբ դիմել է Պատվիրատուին, խնդրելով հաշվի առնել այն հանգամանքը, որ ոչ ավտոմատ ծանուցումը հայտնվել է SPAM բաժնում և խնդրել է ընդունել որակավորման փաստաթղթերը, սակայն Պատվիրատուի կողմից պատասխան չի ստացել:

Ամփոփելով վերոգրյալը, Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն հայտնել է, որ Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը նույն օրը օրենքով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից չի հրապարակվել, ինչի արդյունքում Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն չի տեղեկացվել առաջին տեղ զբաղեցրած լինելու մասին:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով << ֆինանսների նախարարության 06.06.2017թ. թիվ 03/73-3/10146-17 գրությունը, << պաշտպանության նախարարության 29.05.2017թ. թիվ

ԴՎԱ/1565 գրությունը՝ կից փաստաթղթերով, Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ի 12.06.2017թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ ***հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,*** իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: ***Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկաացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 7.5 կետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավելիամատ եղանակով ծանուցում է*** հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ***Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը,*** ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած ***Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝*** g.teryan@mil.am, ***ուղարկում է սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:***

Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սպառազինությանն օժանդակ ապրանքանյութական միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՇՀԱՊՁԲ-29/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով՝ Ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով, հայտ է ներկայացրել Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2017թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.2 կետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են, բացառությամբ՝ «Երվադա» ՍՊԸ-ի, որի ներկայացրած գնային առաջարկում ընդհանուր գինը տառերով սխալ է գրված, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը մերժվել է:

Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն:

Նույն արձանագրության 4.2 կետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Պատվիրատուն 06.04.2017թ. ծանուցմամբ Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ին հայտնել է, որ վերջինս Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված կարգով և ժամկետում g.teryan@mil.am էլեկտրոնային փոստին ուղարկել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.04.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ ***Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով չեն ներկայացվել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ի հայտը*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած «Էքսպրես Շին» ՍՊԸ-ին:

Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն գրությամբ Խորհրդին հայտնել է, որ օրենքով սահմանված ժամկետում բացման նիստի արձանագրությունը Պատվիրատուի կողմից չհրապարակվելու հետևանքով հնարավորություն չի ունեցել տեղեկացվելու, որ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հայտը մերժվել է՝ գումարը տառերով սխալ գրելու պատճառով, իսկ Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, ուստի գրությամբ դիմել է Պատվիրատուին, խնդրելով հաշվի առնել այն հանգամանքը, որ ***ոչ ավտոմատ ծանուցումը հայտնվել է SPAM բաժնում*** և խնդրել է ընդունել որակավորման փաստաթղթերը, սակայն Պատվիրատուի կողմից պատասխան չի ստացել:

Ամփոփելով վերոգրյալը, Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն հայտնել է, որ Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը նույն օրը օրենքով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից չի հրապարակվել, ինչի արդյունքում Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն չի տեղեկացվել առաջին տեղ զբաղեցրած լինելու մասին:

Այսպես, Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ ***հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,*** իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: ***Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկաացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 7.5 կետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է*** հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ***Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը,*** ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած ***Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում***

Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ g.teryan@mil.am, ուղարկում է սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

Խորհուրդն, ուսումնասիրելով Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերը նշված հիմքերը, գտնում է, որ Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն Պատվիրատուի՝ g.teryan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեից ***06.04.2017թ.*** ստացված ծանուցմանն ի պատասխան՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սահմանված ժամկետում և կարգով Պատվիրատուին չի ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Այսպես, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՇՀԱՊՁԲ-29/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտել է մեկ անգամ, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 06.06.2017թ. թիվ 03/73-3/10146-17 գրությամբ Արսեն Պետրոսյան Ֆ/Ա-ին (ՀՎՀՀ՝ 81707373) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ